

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1977 թ. հունվար — դեկտեմբեր)

ՔՈՒՆԴԱՐԻԱ

Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի հրավերով Լոնդոնի համալսարանի արևելագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Դեյվիդ Մարշալ Լենգը այցելել է Բուլղարիա, ուր կարդացել է դասախոսություն նաև կովկասյան հին մշակույթը և Բուլղարիան թեմայով: Դասախոսության զգալի մասը նա նվիրել է Հայաստանին, համառոտակի կանգ առնելով հայ ժողովրդի կազմավորման, պավլիկյան շարժման և այլ հարցերի վրա, անդրադարձել է նաև հայ մշակույթի նշանավոր գործիչներին:

«Հայրենիքի ձայն», 6 մարտի 1977

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Բուդապեշտի Արևելյան Ասիայի գեղարվեստական թանգարանի տնօրեն Կոմպոշ Քարոյը 1976 թ. կազմակերպել է հայկական գորգերի ցուցահանդես, որի մասին բարձր կարծիք է հայտնել Հունգարիայի մամուլը: Ի դեպ, Կոմպոշ Քարոյը 1972-ին հունգարերեն լեզվով գրել է «Հայաստանի ճարտարվեստը» գիրքը, որը հետագայում թարգմանվել է գերմաներեն:

«Պայման», 30 ապրիլի 1977

Կահիրեում լույս տեսնող «Արև» թերթը տպագրել է հունգարական «Մովեսետ» («Արվեստ») ամսագրում լույս տեսած Յուլիան Սարոյի «Հեթիաթային Հայաստան» խորագրով հոդվածը: Դա ակնարկ է մի բանի հայ նկարիչների մասին:

«Արև», 26 հուլիսի 1977

ԼԵՀԱՍՏԱՆ

Վրոցլավի «Օստոլինենում» հրատարակչությունը լույս է ընծայել Միրոսլավա Զակչևսկա-Դուրասովայի «Հայաստանի պատմությունը», որը առաջին այդպիսի հրատարակությունն է Լեհաստանում: Գիրքն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը: Հեղինակը կանգ է առնում հատկապես յեհ-հայկական հարաբերությունների վրա:

«КОМУНИСТ», 16 հուլիսի 1977

ՉԵՍՈՍՆՈՎԱԿԻԱ

Պրահայում շեխերեն լույս է տեսել «Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ» գիրք-ալբոմը: Գրքում զետեղված են շեխ լուսանկարիչ Քամիլ Վիսկոժիլի սև-սպիտակ և գունավոր 150-ից ավելի լուսանկարները, որոնք ներկայացնում են Հայաստանի պատմական հուշարձանները և ներկա կյանքը:

«Շարժում», 5 մարտի 1977

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիայի «Միներվա» հրատարակչությունը լույս է ընծայել Րաֆֆու «Դավիթ բեկը»՝ Մելինե Բուլատյան-Կենեայի թարգմանությամբ: Գրքի առաջարանում թարգմանիչը ընթերցողին ծանոթացնում է Րաֆֆու կյանքի ու գործունեության հետ և խոսում նաև վիպասանի մյուս հայտնի վեպերի մասին:

«Նոր կյանք», 15 հուլիսի 1977

Բուխարեստի «Մերիդիան» հրատարակչությունը լույս է ընծայել ֆրանսերենից ռումիներենի թարգմանված «Հնագիտության աշխարհ» վերնագիրը կողմ գիրքը, որի հեղինակն է Գի Ռաշեն: Հատորում խոսվում է շին Աշխարհի, այդ թվում նաև Հայաստանի ու կովկասի քաղաքակրթության մասին:

«Նոր կյանք», 15 հուլիսի 1977

ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութում լույս է տեսել Լ. Չորմիսյանի «Ֆրանսահայերու պատմությունը» գիրքը, ուր տրված է ֆրանսահայերի կյանքը իր բազմազան կողմերով՝ սկսած 1921—1923 թթ. մինչև մեր օրերը:

«Արաբալու», 6 հուլիսի 1977

ՍԻՐԻԱ

Հալեպում Նիզար Խալիլի թարգմանությամբ լույս են տեսել Գրիգոր Ջոհրայի 14 պատմվածքները՝ «Հուր ցավեր», «Խղճմտանքի ձայներ» խորագրով:

«Պայման», 16 օգոստոսի 1977

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Սալոնիկում անցյալ տարվա հունիսից սկսել է գործել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Սարգիս Հովակիմյան» մշակութային կենտրոնը, որի կազմում գործում են «Արարատ» մշակութային-մարզական միությունը, համանուն պարախումբը և երգչախումբը:

«Հայրենիքի ձայն», 23 մարտի 1977

Աթենքում բացվել է մի նոր թատրոն «Զմարուլա» անունով, որի առաջին ներկայացումն է եղել Նիկոս Ֆոսկոլոսի «Հայկական լուսին» պիեսը: Ներկայացման իրադարձությունները, — ասել է պիեսի հեղինակը, — տեղի են ունենում Անատոլիայի հայկական մի գյուղում եղեռնի տարիներին: Իմ այս ստեղծագործությունը հստակորեն ևս խնդիր էմ գրել արվեստի, տվյալ դեպքում՝ թատրոնի օգնությամբ մերկացնել ու դատապարտել ցեղասպանությունը:

Պիեսում օգտագործված են հայկական երաժշտությունը, պոեզիան: Պատմական տրվյալներ հավաքելու գործում հեղինակին մեծ օգնություն են ցույց տվել հատկապես Աթենքի հայերը: Այս բեմադրության կապակցությամբ «Զմարուլա» թատրոնը հրատարակել է չքիզ ձեռագիրված և հարուստ բովանդակությամբ ուղևորական ալբոմ, ուր կան համառոտ տեղեկություններ հայ մշակույթի մասին, առանձին տեղ է տրված հայկական երաժշտությանը, հատկապես Կոմիտասին:

«Իրական քեր», 8 հուլիսի 1977

ԹՈՒՐԿԻԱ

«Նոր օրը» տպել է մի հաղորդում, որից իմանում ենք, որ «Զումհուրիեթի» 1977 թ. մարտի 22-ի համարում Ահմեդ Օզարը տեղեկագրական հոդվածաշար է հրատարակել Արևելյան Անատոլիայի մասին: Հոդվածագիրը, ի միջի այլոց, գրում է. «...Անիի մեջ այսօր բազմաթիվ եկեղեցիներ կան, բոլորն ալ հայերեն մնացած... Կարսի տեսարժան վայրերուն մեջ թանգարան մըն ալ կա, ավելի ճիշդ՝ հայկական եկեղեցի մը տասներորդ դարեն մնացած: Արևմուտք շատ տպավորիչ է Վանա ծովուն վրա: Աղթամար կղզին կտեսնեք իր Ս. Խաչ եկեղեցիով և նվիրական զանգակատունով: Տասներորդ դարեն մնացած հայկական եկեղեցի մըն է ան, բովը պալատ մը կա և գերեզմանատուն մը: Պալատեն հետք չէ մնացած, իսկ գերեզմանատունեն քանի մը քարեր, և մենք զանոնք կոտորտեր ենք, խորհելով, որ անոնց վրա կյալվուրի խաչեր կան: Աղթամարի

Ս. Խաչ եկեղեցին քանդակագործության նմուշ մըն է, այսօր թանգարան մը: Նախապես ուխտառեղի մըն էր հայոց համար»:

«Պայմար», 8 ապրիլի 1977

«Նոր օր», 8 հուլիսի 1977

ՔՈՒՎԵՅԹ

Ամերիկահայ լրագրող Լ. Քեյհչյանը գրում է, որ Քուվեյթի հայկական գաղութում հայերի թիվը շուրջ 10.000 է: Նրանք ունեն եկեղեցի, դպրոց և այլ կազմակերպություններ: Լիբանանից մոտ հազար հայեր են տեղափոխվել այստեղ: Արարական միացյալ Հմիրությունների հայ բնակչությունը վերջին երկու տարիների ընթացքում եռապատկվել է: Ներկայումս հայերի թիվը 3000 է, որոնց մեծ մասը այստեղ է եկել Լիբանանից:

«Շարժում», 25 հունիսի 1977

ԻՆՆԻԱ

Դանիայում հրատարակվել է հայ պոեզիայի ժողովածու, որում ընդգրկված են Ֆրիկի, Պուդի, Քուչակի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի, Ավ. Խաչատրյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի և Լ. Դուրյանի ճանաստեղծությունները: Առաջարկում է կազմողը համառոտակի անդրադարձել է հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին: Ժողովածուն կազմել է բանաստեղծ Է. Մատիասենը, նկարիչ-ձևավորողն է Ի. Մագիստրացին և թարգմանիչը՝ Ա. Վելյելը: Ժողովածուն հրատարակվել է «Դանիա—ՍՍՀՄ» ընկերության օժանդակությամբ:

«Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի 1977

ՀԱՆԱՆԻԱ

Հունդիայում ներկայումս ապրում են 1600 հայեր: Հայագետ Շոկա. Վան դը Տյուսսենը Հունդիայի ամենամեծ երեկոյան թերթում ամբողջ մի էջ է հատկացրել հայերի ծագման ու սկստմության հարցերին, անդրադարձել է Ամստերդամում առաջին անգամ հայերեն տպագրված Ս. Գրքին, կանգ է առել հուանդացիների և հայերի փոխհարաբերությունների վրա, որ սկսվել են XVII դ.:

Փետրվարի 24-ին ելույթ ունենալով Հունդիայի հեռուստատեսությամբ, նուրհան Գայհան խոսել է հայկական գորգերի մասին:

«Պայմար», 25 մարտի 1977

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հոգանում լույս տեսնող «L'oeil» («Աչք») ամսաթերթը սեպտեմբերի իր համարում ութ էջ է նվիրել հայկական արվեստին՝ տպագրելով ավստրուհի էլիզաբեթ Բաուրի «Հայաստանի արվեստը և ճարտարապետության գանձերը» աշխատությունը՝ սև-սպիտակ և գունավոր նկարներով։ Բաուրը նաև վերջերս ֆրանսերեն ու գերմաներեն լույս տեսած «Հայաստանը, իր պատմությունը, իր արվեստը և իր ճակատագիրը» գրքի հեղինակն է։ «Պայքարում» թարգմանաբար տպված է ամսաթերթում լույս տեսած հոդվածը։

«Պայքար», 8 հոկտեմբերի 1977

ՖՐԱՆՍԻԱ

Վերջին տարիների ընթացքում ֆրանսահայ գաղութում ֆրանսերեն լեզվով լույս են տեսել մի շարք գրքեր ընդհանրապես հայերի և մասնավորապես Մեծ Նոնոնի մասին. դրանցից են Ժան-Մարի Դաոդուի «Օրինակելի ցեղասպանություն մը» գիրքը, որը բավական աղմուկ հանեց ոչ միայն հայ, այլև օտար շրջաններում, հորեն Մարկոսյանի հուշերի հատորը՝ «Հայ տղելի մը ողիսականը»։ Վերջերս լույս է տեսել Գևորգ Զյումայուլյանի «Ներշնչության մուրացկաններ» գիրքը՝ հեղինակի հուշերը Իզմիրի 1922 թ. ողբերգության մասին։ Լույս է տեսել նաև Հակոբ Գրիգորի «Ծանոթ և անծանոթ հայեր» գիրքը, ուր խոսվում է անվանի հայերի մասին։

«Արև», 11 հունվարի 1977

Հայերի թիվը Ֆրանսիայում ներկայումս հասնում է 300.000-ի. նրանք հիմնականում ապրում են Փարիզում, Մարսելում և Լիոնում։ Սակայն հայոց լեզուն հետզհետե անգործածական է դառնում հայկական շրջապատում։ Ընթերցողի պակասության պատճառով չեն հրատարակվում հայկական գրքեր, բավական թվով հայկական թերթեր դադարել են գոյություն ունենալուց. այժմ լույս են տեսնում մեկ օրաթերթ, մեկ շաբաթաթերթ և մեկ ամսաթերթ։ Վանոնավոր հայկական դպրոցներ են «Դպրոցասերը» և «Մուրատյան» վարժարանը։

«Պայքար», 5 ապրիլի 1977

Լույս է տեսել Իվ Թերնոնի «Հայերը. ցեղասպանության մը պատմությունը» (Yves Ternon. Les Arméniens histoire d'un génocide) խորագրով գիրքը։ Հեղինակը իր գրքում տալիս է հայկական ջարդերի մանրամասն պատմու-

թյունը։ Գիրքը բաղկացած է 300 էջից, պարունակում է բազմաթիվ պատմական վավերաթղթեր։

«Աշխարհ», 16 ապրիլի 1977

Մարսելում հրատարակվող «Արմենիա» ամսաթերթին պատասխան-նամակ է ուղարկել Ֆրանսիական կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ժորժ Մարշեն, որն ի միջի այլոց գրել է. «Ապրիլի 24-ի ոգեկոչումը այս տարի ևս ցույց տվավ, որ 62 տարի վերջ մարդկության հանդեպ գործած նման ոճի մը չէ կարող մոռացության կամ անտարբերության մեջ ընկղմիլ... Թույլ տվեք վերհիշել, որ այն շրջանին, այս բարբարոս արարքը դատապարտելու և հատուցում պահանջելու ուղղությամբ բարձրացող մեծ ձայներու մեջ կգտնվեին Մարսել Կաշենի, Անատոլ Ֆրանսի և Հանրի Բարյուսի ամենաուժգին շեշտով ձայները։ Նույնպես վերհիշել, որ 1920 թվականին ի վեր ֆրանսական Համայնավար կուսակցությունը հստակ և պայծառ դիրքավորում ունեցած է այս հարցին արդար և նպաստավոր լուծումի մը հայ ժողովուրդի ի նպաստ, հանդիսավորապես հայտարարելով, որ մոռացումը համահավասար է ոճի մը...»։

«Լեաբեր», 27 օգոստոսի 1977

«Աշխարհ» թերթում տպագրված է հոդված նվորպայի հայագետների մասին, սկսած XVII դարից մինչև մեր օրերը։ Այստեղ հատկապես նշվում են ֆրանսիացի հայագետները, որոնց մասին տրվում են հակիրճ տեղեկություններ։

«Աշխարհ», 17 սեպտեմբերի 1977

ԱՆՓԼԻԱ

Լոնդոնի անգլիական «Ամբրոսին Սինգերս» երգչախմբի հետ կոմպոզիտոր և դիրիժոր Լորիս Ճգնավորյանը հանդես է եկել մի համերգով, որի ծրագրում եղել են միջնադարյան հայ մեղեդիներ ու երգեր և Կոմիտասի «Պատարագը»։ Համերգը ջերմ ընդունելություն է գտել և արժանացել է «Թայմսի», «Դեյլի Տելեգրաֆի» և ուրիշ թերթերի դրվատանքին։

«Սևան», 20 հոկտեմբերի 1976

Լոնդոնի արևելյան գրքերի «Լուզա» հրատարակչությունը լույս է ընծայել դոկտոր Վրեժ Ներսեսյանի «Հայկական ուսումնասիրություններ արևմտյան հանդեսներում» աշխատությունը։ Գրքում տրված է 1872—1972 թթ. տարբեր հանդեսներում լույս տեսած 1500 հոդվածների ցուցակը։ Հոդվածները վերաբերում են հայ ժո-

ղովրդի պատմությանը, մշակույթի տարբեր բնագավառներին. դրամագիտությանը, դիցաբանությանն ու բանահյուսությանը, ձեռագրերին, հնագիտությանը, ճարտարապետությանը, երաժշտությանը, մանրանկարչությանը, հայ գաղթավայրերին և այլն: Վ. Ներսեսյանը ներկայումս Բրիտանական գրադարանի հայկական քառնի վարիչն է:

«Նոր օր», 11 մարտի 1977

«Արև», 11 մայիսի 1977

Հոնգոնում հրատարակվել է Դեյվիդ Մարշալ Լենգի և Քրիստոֆեր Ուոքերի «The Armenians» խորագրով գիրքը, որը բաղկացած է ներածությունից և հետևյալ գլուխներից. «Հայ ժողովուրդը», «Ջարդերու ժամանակաշրջանը», «Ներկա դրությունը՝ ժողովուրդի մը վերահանումը»: Հեղինակներն օգտագործել են զանազան լեզուներով բաղմամբիվ աղբյուրներ: Բրբհ հավելված ներկայացված է Պոլսի հայոց պատրիարքի տեղեկագիրը արևմտահայերի վիճակի մասին: Գրքում տպված են նաև հայագիտական գրքերի և հայկական շարժանկարների ցուցակներ:

«Հայրենիքի ձայն», 6 մարտի 1977

«Արև», 26 ապրիլի 1977

Հոնգոնի «Մաշտոց պրես» հրատարակչությունը լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը: Թարգմանությունը գրաբարից կատարել է Միշա Գյուտյանը, որը գրքի նախաբանում ընթերցողին է ներկայացնում Նարեկացու կյանքը: Գրող և թարգմանիչ Միշա Գյուտյանը երկար տարիներ է, որ ղրաղվում է հայ գրականությունը անգլերեն թարգմանելու և հրատարակելու գործով: Նրա թարգմանությամբ արդեն լույս են տեսել Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Թոթովենցի ստեղծագործությունները. ինչպես նաև սովետահայ պոեզիայի անթուղ գիրքներ:

«Գրական քերթ», 15 հուլիսի 1977

Իրանի «Հայ կին» միության նախաձեռնությամբ Անգլիայում տպագրվել է «Հայուհին և իր տարազները» գիրք-ալբոմը, որում ամփոփված են հայ կնոջ 44 տարազների գունավոր լուսանկարները սկսած հնագույն շրջանից մինչև XIX դարի վերջը:

«Շառժում», 25 հունիսի 1977

ԻՏԱՎԻԱ

Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության կենտրոնը մի շարք այլ հաստատությունների

համագործակցությամբ կազմակերպել է հայ մշակույթին նվիրված դասընթացներ: Միլանի համալսարանի փոխ-տեսուչ, պրոֆեսոր Ջ. Պոլոնիեզին տարեշրջանի բացման իր խոսքում նշել է հայ մշակույթի նշանակալի դերը մարդկային քաղաքակրթության պատմության մեջ: Դասընթացը բաղկացած է 25 դասախոսություններից, որոնք կարդալու են Թուրինի, Վենետիկի, Բոլոնիայի, Միլանի համալսարանների, գիտական և ուսումնական այլ կենտրոնների ինչպես իտալացի, այնպես էլ սփյուռքահայ ճանաչված գիտնականներ: Դասընթացների ունկնդիրները կծանոթանան Հայաստանի աշխարհագրությանը, պատմությանը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Առանձին դասախոսություններ նվիրվելու են հայոց լեզվին, հայ ժողովրդի արվեստին, մասնավորապես՝ երաժշտությանը, ճարտարապետությանը, մանրանկարչությանը, գրականությանը:

«Հայրենիքի ձայն», 16 փետրվարի 1977

Դ. Ֆ. Հ

Մյունխենում հիմնված Բավարիայի հայ հայրենակցական միության ատենապետ Հակոբ Ազարյանը հայտնում է, որ Մյունխենում գոյություն ունի փոքրաթիվ հայ գաղութ, բաղկացած մոտ 500—600 մարդուց, որոնց մեծ մասը եկել են Պոլսից: Գաղութն ունի ակումբ, կազմակերպում է դասախոսություններ, մշակութային զանազան այլ միջոցառումներ:

«Արև», 27 ապրիլի 1977

Ինչպես տեղեկանում ենք «Աշխարհ» շաբաթաթերթից, Արևմտյան Գերմանիայում լույս է տեսել «Նախակրթության, նոմադիկ կոմսության և Փոքր Հայաստանի թագավորության շրջանների բերդերը» գիրքը, որի հեղինակն է էդուարդ Քերսթենը: Հնագիտական հետազոտական այս աշխատությունում ընդարձակ բաժին է նվիրված հայկական 26 բերդերին, տրված են 90 լուսանկարներ, բաղմամբիվ գծագրեր ու հատակագծեր: Աշխատության մեջ ճշտված են բերդերի տեղագրությունը և կառուցման թվականները: Այս գիրքը արդյունքն է Բոննի համալսարանի կողմից տարիներ շարունակ կատարված հետախուզական արշավանքների:

«Աշխարհ», 3 դեկտեմբերի 1977

ԲՐԱՋԻԼԱ

Բուենոս-Այրեսում դեռևս 1965 թ. իսպաներեն լույս է տեսել Աշոտ Արծրունու «Հայ ժողովրդի պատմություն» աշխատությունը, որը երկրորդ անգամ հրատարակվել է 1970-ին:

Բրազիլաբնակ պրոֆեսոր Հակոբ Քեչիշյանը այդ գիրքը իսպաներենից թարգմանել է պորտուգալերենի, որը Սան-Պաուլոյի Հայ կենտրոնի վարչության նախաձեռնությամբ հրատարակված է 1976-ի վերջերին: Գիրքը բաղկացած է 460 էջից, ունի 91 նկար և 15 քարտեզ: Առաջարանի հեղինակն է Սան-Պաուլոյի համալսարանի հին և միջին դարերի պատմության դասախոս և գրականության ու փիլիսոփայության գիտությունների բաժանմունքի տնօրեն զոկտ. էվրինիտիետես Սիմուես դե Փարլան:

„The Armenian Reporter“
«Տեղեկատու», 11 փետրվարի 1977

ԿԱՆԱԳԱ

Վերջերս հրապարակվել է Արա Խալիոզյանի բանասիրական մի աշխատությունը անգլերեն, որը կոչվում է «Հայերը, նրանց պատմությունն ու մշակույթը»: Գիրքը, որ բաղկացած է 212 էջից, մի ուղեցույց ձեռնարկ է օտարազգի ընթերցողին ծանոթացնելու հայ ժողովրդի պատմությանը՝ սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Հեղինակը անդրադարձել է նաև այժմյան հայկական գաղթությանը: Առանձին գլուխներ են հատկացված հայոց լեզվին, երաժշտությանը, ճարտարապետությանը և գրականությանը:

«Հայրենիքի ձայն», 23 մարտի 1977

Կանադայի Վինձոր քաղաքի համալսարանի դասախոս, պրոֆ. Վ. Քրիփինսկին ընդարձակ ուսումնասիրություն է պատրաստել՝ նվիրված լեհաստանի հայ գաղութի անցյալին: «Պայքարը» թարգմանաբար տպագրել է պրոֆեսորի այդ հարցին նվիրված դասախոսությունը, որ նա կարդացել է Վինձոր քաղաքի հայ համայնքի համար:

«Պայքար», 2, 4 հունիսի 1977

ՎԵՆԵՑՈՒԵԼԱ

Վենեցուելայում հայերի թիվը դալի ավելացել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1960 թ. կազմվել է հայ գաղութի միություն, 1965-ին ձեռնարկվել է եկեղեցու և դպրոցի շինարարություն: Կարակասում ստեղծվել է «Արարատ Հայոց Տուն»: Կազմվել են Տիկնանց միություն և Երիտասարդական միություն: Վենեցուելայի հայ գաղութում այժմ կան 1500 հայեր, որոնց մեծ մասն ապրում է Կարակասում: Գաղութն ունի նաև շաբաթօրյա դպրոց 80 աշակերտներով:

«Արարատ», 8 սեպտեմբերի 1977

Ա Մ Ն

Նյու Յորքում լույս է տեսել Արթուր Չուաբյանի գիրք-ալբոմը Հայաստանի մասին, 600 սև-սպիտակ և 32 գունավոր նկարներով: Գրքի ներածության մեջ խոսվում է հայոց հին պատմության և ներկա Հայաստանի մասին:

«Ապագա», 12 փետրվարի 1977

Դետրոյտի Միջազգային հաստատությունը փետրվարի 13-ին բաց է արել հայկական մշակույթին և պատմությանը նվիրված ցուցահանդես, որտեղ ցուցադրված են հին ձեռագրեր, մագաղաթներ, ինչպես նաև հայկական գորգեր, ասեղնագործություններ, տարազներ և մետաղյա դրամներ:

«Արև», 29 մարտի 1977

Հ. Բ. Ը. Մ. հրատարակել է երեք գիրք: Իրանցից առաջինը ամերիկահայ բանաստեղծների քերթվածներն են՝ անգլերեն բնագրով և հայերեն թարգմանությամբ: Հատորը խմբագրել և թարգմանությունները կատարել է փարիզահայ բանաստեղծ և թարգմանիչ Կարիկ Պասմաճյանը: Խմբագրության աշխատանքներին մասնակցել են Հերլտ Պոնտը, Ջարեհ Մելքոնյանը և Երվանդ Ազատյանը: Գիրքն ունի հայերեն և անգլերեն ներածական, ինչպես նաև տրված են ղեկավար գործերի 21 հեղինակների մասին մանրամասն տեղեկություններ: Բաղկացած է 141 էջից: Հաջորդ աշխատությունը Ջարեհ Մելքոնյանի հայերենի դասագիրքն է, որի առաջին հատորը լույս է տեսել անցյալ տարի: Գիրքը բաղկացած է 250 էջից:

Երրորդ աշխատությունը 140 էջանոց մի հատոր է, որում ղեկավարված են հայերեն լեզվին, հայրենիքին և հայ ժողովրդին նվիրված մանկապատանեկան բանաստեղծություններ, բաղմաթիվ հանելուկներ: Գրքի խմբագրմանը և նյութերի հավաքմանը իրենց օժանդակություններն են ցույց տվել Հ. Բ. Ը. Մ.-ի «Ալեք Մանուկյան» վարժարանի վաստակավոր ուսուցչուհի Գ. Գրլըճյանը և Ա. Ներսեսյանը:

«Պայքար», 16 դեկտեմբերի 1976

5 մարտի 1977

6 օգոստոսի 1977

Նյու Յորքում լույս է տեսել Ստեփան Սվաճյանի «Ուղևորություն մը պատմական Հայաստանի մեջ» գիրքը 672 էջով, որտեղ տպագրված են 180 լուսանկարներ և 20 քարտեզներ: Գրքում խոսվում է հայկական հին մշակույթի, Հայաստանի քաղաքական աշխարհագրության,

հայկական թագավորության ծագման ու անկման, ինչպես նաև Օսմանյան կայսրության արշավանքների և հայ ժողովրդի դեմ գործադրած ցեղասպանության մասին: Վերջին գլուխը նվիրված է Սովետական Հայաստանին: Հատորի հավելվածում զետեղված են Մեծ Եղեռնի հետ կապված վավերագրեր, զանազան պաշտոնական գրություններ, օտար անձանց կողմից տրված վկայություններ:

«ԼՈՐ օր», 2 օգոստոսի 1977

1977 թ. ասյրիից լոս օնջելոսում սկսել է լույս տեսնել հայերեն նոր ամսագիր՝ «Ասյրիլը», որի հրատարակիչներն են նախկին իրանահայեր Նուրար և Հարություն Երիցյան եղբայրները: Ամսագիրը լուսարանում է մշակութային հարցեր, ինչպես նաև անդրադառնում է Կալիֆորնիայի հայ համայնքի կյանքին:

«Հայրենիքի ձայն», 11 հունվարի 1978

Ն. ՎԱՐԳԱՆՅԱՆ